2592

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/50/51

ք. Երևան «13» նոյեմբերի2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն **Արթուր Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և «ԱՔԱՐԱ» ՍՊԸ-ն, ի դեմստնօրենի պաշտոնակատար **Արթուր Հովհաննիսյանի**, որըգործումէ ընկերության կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝**Կատարող**), մյուսկողմից, կնքեցինսույնպայմանագիրըհետևյալիմասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Շիրակի մարզի Գյումրի հանայնքի «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի փայտե պատշգամբի, ինչպես նաև մարզադահլիճի հատակների վերանորոգում» և ՀՀ Շիրակի մարզի Գյումրի հանայնքի «Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի տանիքի վերանորոգում» ծրագրերի նախագծման խորհրդատվական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ ներառյալ նախագծման առաջադրանքին, համապատասխան և սահմանված ժամկետներում:

1.3 Սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված համաձայնեցումները և դրանց արդյունքում առաջացած հավելյալ աշխատանքները չեն նախատեսում պայմանագրով սահմանված ժամկետի փոփոխություն:

1.4 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետը կարող է փոփոխվել միայն նախագծման առաջադրանքի փոփոխման դեպքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու ծառայության համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ընդունել կամ չընդունել Պայանագրի 2.4.5 կետով առաջադրվող մասնագետի թեկնածությունը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և. ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել տեխնիկական բնութագրում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային լուծումները՝ ներառյալ աշխատանքային ծավալները, համաձայնեցնել համայնքի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ նախագծման ընթացքում, նվազագույնը երկու անգամ:

2.4.5 Արտակարգ կամ չնախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար Հավելված 4-ում ներկայացված մասնագետների փոփոխության դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին: Ընդ որում, առաջադրվող մասնագետի որակավորումը և աշխատանքային փորձը պետք է լինի համարժեք կամ առավել փոխարինվող մասնագետի որակավորումից և աշխատանքային փորձից:

2.4.6 Նախագծի փորձաքննությունն իրականացնելու նպատակով, սույն պայմանագրի 3.1 կետին համապատասխան ծառայության արդյունքը հանձնելիս, Պատվիրատուին տրամադրել նախագծման բոլոր գրքերի երկուական թղթային օրինակ հայերեն լեզվով (ինչպես նաև էլեկտրոնային՝ AutoCAD, Word, Excel և PDFտարբերակով), իսկ փորձաքննության ավատից հետո Պատվիրատուին տրամադրել նաև տեխնիկական բնութագրում նշված մնացած քանակները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.1.1 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության: Եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն **15 աշխատանքային օրվա** ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը **Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում** շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության:

3.1.2 Փորձաքննության արդյունքում փորձաքննողի կողմից տրամադրվում է դրական կամ բացասական եզրակացություն, որը Պատվիրատուն տրամադրում է Կատարողին: Պատվիրատուն, փորձաքննության բացասական եզրակացություն ստանալու դեպքում, 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և փորձաքննության բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը **Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում** շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն վերջնական արդյունքը ներկայացնում է փորձաքննության:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն փորձաքննության դրական եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը, դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը և փորձաքննության դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է**2,955,000 (երկու միլիոն ինը հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու և **3.1 կետով** սահմանված յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով հետևյալ դեպքերում և ժամկետներում՝

ա)<u>Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետ.</u> սույն պարագայում ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն Պատվիրատուի կողմից ծառայության արդյունքի շտկված տարբերակը ընդունելու փաստը ֆիքսող 3.1.1 կետում նշված գրության,

բ)<u>Փորձաքննության ժամկետ.</u>տվյալ դեպքում տույժի վճարման սկզբնաժամկետ է համարվում 3.1.2 կետում նշված փորձաքննության բացասական եզրակացությունը Պատվիրատուի կողմից Կատարողին 3.1.2 կետով սահմանված կարգով տրամադրելու հաջորդող աշխատանքային օրը, իսկ ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն պայմանագրի 3.2 կետով սահմանված՝ Պատվիրատուի կողմից ստորագրվող եզրակացության:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծանախահաշվային բացթողումների հետևանքով շեղումներ առաջանալու դեպքում, նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստից ելնելով:Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

---

[1]Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.4.2 Սույն պայմանագրի 5.4.1 կետով սահմանված նախագծանախահաշվային բացթողումների բացառություն են հանդիսանում գոյություն ունեցող ստորգետնյա կոմունիկացիաների հետևանքով առաջացող շեղումները, որոնք հայտնի չեն եղել կամ չեն մատնանշվել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնեցման պահին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույնպայմանագրովևսույնպայմանագրիհիմանվրակնքված համաձայնագրերովպարտավորություններնամբողջությամբկամմասնակիորենչկատարելուհամարկողմերնազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, ևորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիհիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունը շարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնհիրավունքունիլուծելպայմանագիրը՝այդմասինանհապեստեղյակպահելովմյուսկողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

7.2 Պայմանագրիցծագածկողմիվճարայինպարտավորությունը չիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝հակընդդեմպարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքը չիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայությանմատուցմանժամկետը կարողէերկարաձգվելմինչև պայմանագրով այդժամկետը լրանալը՝Կատարողիառաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որՊատվիրատուիմոտչիվերացելծառայությանօգտագործմանպահանջը, իսկԿատարողիառաջարկությունը ներկայացվելէոչուշ, քանպայմանագրովիսկզբանեծառայություններիմատուցմանհամարսահմանվածժամկետը լրանալուցառնվազն 5 օրացուցայինօրառաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում

ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.11Սույնպայմանագիրըկազմվածէ 18էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունենհավասարազորիրավաբանականուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4հավելվածներըհանդիսանումենպայմանագրիանբաժանելիմասը, յուրաքանչյուրկողմինտրվումէ պայմանագրիմեկօրինակ:

7.12ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանիրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	,,ԱՔԱՐԱ,, ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք.Գյումրի, Ծուլուկիձե 5
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 05524184
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 2472600008040000
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Գործադիր տնօրեն	Տնօրենի պ/կ
Արթուր Սողոմոնյան	Արթուր Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«13» նոյեմբերի 2020 թ. կնքված
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/50/51 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Չ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	Նախահաշվային գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/23	*ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի փայտե պատշգամբի, ինչպես նաև մարգադահիձի հատակների վերանորոգում» աշխատանքների Ծրագրի նախագծման խորհրդատվական ծառայություններ*	դրամ	1 730 000	1	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31	*Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 100 օր*
2	71241200/24	*ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մտեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի տանիքի վերանորոգում» աշխատանքների Ծրագրի նախագծման խորհրդատվական ծառայություններ*	դրամ	1 225 000	1	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31	*Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օր*

** Կից ներկայացվում է տեխնիկական բնութագիր (նախագծման առաջադրանքը)՝ Հավելված 1.1-ը:*

Սույն ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները և արտոնագրերը.
ըստ «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում» հետևյալ ոլորտների՝

Չափաբաժիններիհամարները	*Պահանջվողլիցենզիայի(ների) տեսակը(ները)՝ ներդիրը(ները) և արտոնագրերը*
1	*2*
1	Բնակելի, հասարակական և արտադրական՝ Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում, Ճարտարապետի արտոնագիր բարձրագույնդասի: Էներգետիկ՝Քաղաքաշինության բնագավառում բնակելի և հասարակական արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր:
2	Բնակելի, հասարակական և արտադրական՝ Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում: Ճարտարապետի արտոնագիր բարձրագույն դասի :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

,,ԱՔԱՐԱ,, ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Գյումրի, Ծուլուկիձե 5

ՀՎՀՀ՝ 05524184
Հ/Հ՝ 2472600008040000
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Տնօրենի պ/կ
Արթուր Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Տեխնիկական բնութագիր
(ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

Չափաբաժին 1

Օբյեկտ . *«Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի փայտե պատշգամբի, ինչպես նաև մարզադահլիճի հատակների վերանորոգում*

Հասցե. *ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնք Ամեման փ. 40 շենք «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ:*

Նախագծմանհիմքը	ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2019 թվականի N 1135-Ն, որոշմամբ նախատեսված Գյումրի համայնքի «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի փայտե պատշգամբի, ինչպես նաև մարզադահլիճի հատակների վերանորոգում» Ծրագրի վերաբերյալ Գյումրի Համայնքի ղեկավարի կողմից տրված 20.11.2019թ. N182 ճարտարապետահատակագծային առաջադրանք:
Պատվիրատու	Հայաստանիտարածքայինզարգացմանհիմնադրամ
Նախագծմանփուլ	Աշխատանքայիննախագիծ
Ելակետայինտվյալներ	Նախատեսվում է իրականացնել «Կումայրի» պատմամշակութային արգելոցի պահպանման տարածք, տեղական նշանակության հուշարձան «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մոտավորապես 130 քմ փայտե պատշգամբի վերականգնման, մարզադահլիճի 450,0 քմ նեքին հարդարման, ներքին էլեկտրալուսավորության, 230,0 քմ առաստաղի և հատակների վերակառուցման, ինչպես նաև սպորտդահլիճի ամբողջ մասնաշենքի գոյություն ունեցող ջեռուցման համակարգի վերականգնման և կարգաբերման նածագծման աշխատանքներ:
Կառույցիբնութագիրըեւնախագծայինլուծումներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և հաստատվեն նաև ՀՀ կառավարության «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» 26 հունիսի 2009թ. N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով, քանի որ Գյումրի համայնքի «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց»

		ՊՈԱԿ-ի շենքը հանդիսանում է «Կումայրի» պատմամշակութային արգելոցի պահպանման տարածք, տեղական նշանակության հուշարձան: Անհրաժեշտէ վերակառուցել «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի փայտե պատշգամբի ծածկը, առաստաղը և հատակները, վերանորոգել փայտե կառուցվածքները, ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով համայնքի հետ համաձայնեցնելուց հետո փայտե կառուցվածքները փոխարինել նորով: Նախատեսել պատշգամբի և սպորտ դահլիճի ներքին էլ. լուսավորության և հակահրդեհային ազդարարման համակարգի տեղադրման աշխատանքներ: Վերակառուցել և փոխարինել սպորտ դահլիճի փայտե հատակները սպորտային վինիլային ծածկույթով, պլաստմասե շերտերով առաստաղը փոխարինել սպորտ դահլիճին համապատասխան ամուր նյութով նախատեսված առաստաղով: Փորձարկել և վերականգնել սպորտ դահլիճի մասնաշենքի ջեռուցման համակարգը: Ուսումնասիրել Սպորտ դահլիճի պատերի ուղղահայաց ճաքը տալ եզրակացություն և նախատեսել համապատասխան լուծումներ:
	Կատարմանենթակա (նախատեսվող) աշխատանքներիհամառոտբնութագիրը	Անհրաժեշտ է վերակառուցել և վերականգնել «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի պատշգամբը: Վերակառուցել սպորտ դահլիճի հատակները և առաստաղը, կատարել ներքին հարդարման աշխատանքներ, ինչպես նաև վերականգնել սպորտ դահլիճի մասնաշենքի ջեռուցման համակարգը:

Ավարտվածնախագիծըներկայացվումէպատվիրատուինստորևներկայացվողքանակություններով՝

Գիրք	Անվանում	Բովանդակություն	Քանակ	
			Հայերեն	Ռուսերեն
Գիրք-1	Բացատրականմաս	Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ,ելակետայինտվյալներ, ճարտարապետահատակագծայինառաջադրանք (նախագծմանթույլտվություն), նախագծմանառաջադրանքևայլն	6	1
Գիրք-2	Գծագրերականմաս	Աշխատանքայինգծագրեր: Չափագրականգծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, ներառելլուսանկարներ): Նախագծվողկառուցներիհատակագծեր, կտրվածքներ, հատույթներ, հանգույցներևայլնՄ 1-100, Մ 1-50, Մ 1-20 : Կոնստրուկտիվտարրերիգծագրեր, մանրամասնեհավաքմասնագրերևայլն:	6	1
Գի	Աշխատանքայինծավալնե	Աշխատանքայինծավալներիմանրամասնեկարագրումով,	6	1

րք-3	րիամփոփագիր	ծավալներիքանակներով, միավորներնդհանրականգներիդատարկյունակներով: 1.Ծավալաթերթ-նախահաշիվ, նշելովբոլորներառվածաշխատանքներիծավալներընմիավորգները, ներառյալբոլորանհրաժեշտակիծախսերը, բացիշահույթիցնԱԱՀ-ից: ՇահույթընԱԱՀ-նկիտարելծավալաթերթ-նախահաշվիվերջում: 2.Մրցութայինծավալաթերթ՝նույնծավալաթերթ-նախահաշիվըառանցտողերիմիավորարժեքների, նշելովմիայնյուրաքանչյուրգլխիգումարընհրակշիռը(%) ընդհանուրուղիղարժեքինկատմամբ:		
Գի րք-4	Աշխատանքիկազմակերպում	Աշխատանքիկազմակերպմանտեխնոլոգիականհիմնականպրոցեսներինկարագրությամբ, անհրաժեշտմարդկայինմեքենա-մեխանիզմներիքանակիգնահատմամբ, հիմնականաշխատանքիիրականացմանօրացուցայինգրաֆիկի կազմման,հենանիշերիաղյուսակներ, համաձայնեցումներ, օգտագործվողնյութերինսարքավորումներիտեխնիկականմասնագրերունկարագրություններ, օգտագործվող նյութերի նվազագույն երաշխիքային ժամկետներնայլն:	6	1
Գի րք-5	Նախահաշիվներ	Մանրամասնըստօբյեկտներինախահաշիվներիկազմում՝ • Ըստգործող նորմերի	1	1

**Գիրք-1 և 2-ումհայերենևռուսերենտարբերակներըկարողենհամատեղվել:

Նախագծայինփաստաթղթերիմշակմանարդյունքումնախագծողը պետք է ներկայացնի նաև՝

- Շինարարականծրագրիկատարմանհամարօգտագործվողնյութերին (կամ) սարքերիուսարքավորումներիտեխնիկականբնութագրերըկազմված ,Գնումներիմասին ՀՀօրենքի13-րդհոդվածիպահանջներինհամապատասխան,
- Կապալիօբյեկտի, դրաառանձինմասերի (կոնստրուկցիաներինայլն) նօգտագործվելիքնյութերին (կամ) սարքերիուսարքավորումներիերաշխիքայինժամկետներիններկայացվողնվազագույնպահանջները,
- Աշխատանքներիառանձինտեսակներիկատարմանօրացուցայինժամանակացույցը,
- Նախագծայինփաստաթղթերըպատվիրատուինհայերենևռուսերենլեզուներով՝թղթայիննէլեկտրոնային(AutoCAD, Word, Excel և PDF) տարբերակներով)

Նախագծիհամաձայնեցումը

- Նախագծմանընթացքում էսքիզային նախագիծը և նախագծայինլուծումները, ներառյալաշխատանքայինծավալները, համաձայնեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության,Գյումրու համայնքապետարանինՀՏԶՀ-իգրասենյակիհետ:, ինչպես նաև ՀՀ կառավարության «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» 26 հունիսի 2009թ. N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով այլ շահագրգիռ կառույցների հետ:
- Նախագիծըհամաձայնեցնելշահագործողնայլշահագրգիռկազմակերպություններիհետ, ինչպեսնաևայլպետականլիազորմարմինների (ԱԻՆնայլն) հետըստանհրաժեշտության:

Այլպահանջներ

- Նախագծմանընթացքում, նախագծմանառաջադրանքումկարողենմտցվելմասնակիփոփոխություններևճշտումներ:
- Նախագիծըփորձաքննությաններկայացնումէպատվիրատուն:

- Նախագծայինփաստաթղթերըկնդունվենպատվիրատուիկողմիցմիայնբոլորանհրաժեշտհամաձայնեցումներինփորձաքննություններիդրականեզրակացություններիառկայությանդեպքում:
- ՆախագիծըպետքէհամապատասխանինախագծմանառաջադրանքինուՀՀտարածքումգործող շինարարականնախագծմաննորմերինկանոններին:
- ՆախագծայինփաստաթղթերըպետքէկազմվենՀՀտարածքումգործողաշխատանքայինգծագրերինկայացվողստանդարտներինհամապատասխան:
- Նախագծողիկողմիցշինարարությանսկզբիպահինպետքէկատարվիկառույցինշահարումըևանձնվիկապալառուին:

Նորմատիվ վկայակոչումներ

ՀՀ կառավարության «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում:
ՀՀ կառավարության «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» 26 հունիսի 2009թ. N 792-Ն որոշում:

ՀՀՇՆ I-2.01-99 Ինժեներական հետազննություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ:
Բացի նշվածներից նաև օրենքով տվյալ գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ու նորմատիվ փաստաթղթեր:

Չափաբաժին 2

Օբյեկտ . ***«Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի տանիքի վերանորոգում»***

Հասցե. ***ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնք Աբովյան փ. 133/6 շենք «Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն» :***

	Նախագծմանհիմքը	ՀՀ կառավարության 22 օգոստոսի 2019 թվականի N 1135-Ն, որոշմամբ նախատեսված Գյումրի համայնքի «Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի տանիքի վերանորոգում» Ծրագրի վերաբերյալ Գյումրի Համայնքի ղեկավարի կողմից տրված 20.11.2019թ. N183 ճարտարապետահատակագծային առաջադրանք:
	Պատվիրատու	Հայաստանիտարածքայինզարգացմանհիմնադրամ
	Նախագծմանփուլ	Աշխատանքայիննախագիծ
	Ելակետայինտվյալներ	Մոտ 450,0 քմ տանիքի վերակառուցում
	Կառույցիբնութագիրըևնախագծայինլուծումները	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և հաստատվեն նաև ՀՀ կառավարության «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը

		հաստատելու մասին» 26 հունիսի 2009թ. N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով, քանի որ Գյումրի համայնքի «Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքը գտնվում է «Կումայրի» պատմամշակութային արգելոցի պահպանման տարածքում: Անհրաժեշտէ իրականացնել նոր հիմնակմաղքով և փայտե կոնստրուկցիաներով մոտ 450,0 քմ գունավոր ցինկապատ պրոֆիլավոր մետաղաթիթեղով տանիքի պատրաստման աշխատանքներ և նախատեսել կազմակերպված արտաքին ջրահեռացում:
	Կատարմանենթակա (նախատեսվող) աշխատանքներիհամառոտբնութագիրը	Անհրաժեշտ է իրականացնել «Կումայրի» պատմամշակութային արգելոցի պահպանման տարածքում գտնվող տիկնիկային թատրոնի շենքի տանիքի վերակառուցման աշխատանքներ:

Ավարտվածնախագիծըներկայացվումէպատվիրատուինստորներներկայացվողքանակություններով՝

Գիրք	Անվանում	Բովանդակություն	Քանակ	
			Հայերեն	Ռուսերեն
Գիրք-1	Բացատրականմաս	Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ,ելակետայինտվյալներ, Ճարտարապետահատակագծայինառաջադրանք (նախագծմանթույլտվություն), նախագծմանառաջադրանքևայլն	6	1
Գիրք-2	Գծագրերականմաս	Աշխատանքայինգծագրեր: Չափագրականգծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, ներառելլուսանկարներ): Նախագծվողկառուցներիհատակագծեր, կտրվածքներ, հատույթներ, հանգույցներևայլնՄ 1-100, Մ 1-50, Մ 1-20 : Կոնստրուկտիվտարրերիգծագրեր, մանրամասնեհավաքմասնագրերևայլն:	6	1
Գիրք-3	Աշխատանքայինծավալներիամփոփագիր	Աշխատանքայինծավալներիմանրամասնեկարագրումով, ծավալներիքանակներով, միավորևընդհանրականգներիդատարկյունակներով: 1.Ծավալաթերթ-նախահաշիվ, նշելովբոլորներառվածաշխատանքներիծավալներընմիավորգները, ներառյալբոլորանհրաժեշտակիծախսերը, բացիշահույթիցնԱԱՀ-ից: ՇահույթընԱԱՀ-նկիհարելծավալաթերթ-նախահաշվիվերջում: 2.Մրցութայինծավալաթերթ՝նույնծավալաթերթ-նախահաշիվըառանցտողերիմիավորարժեքների, նշելովմիայնյուրաքանչյուրգլխիգումարըևնրակշիռը(%) ընդհանուրուղիղարժեքինկատմամբ:	6	1
Գիրք-4	Աշխատանքիկազմակերպում	Աշխատանքիկազմակերպմանտեխնոլոգիականհիմնականպրոցեսներինկարագրությամբ, անհրաժեշտմարդկայինևմեքենա-մեխանիզմներիքանակիգնահատմամբ, հիմնականաշխատանքիիրականացմանօրացուցայինգրաֆիկի կազմման,հենանիշերիաղյուսակներ, համաձայնեցումներ, օգտագործվողնյութերինսարքավորումներիտեխնիկականմասնագրերունկարագրություններ, օգտագործվող նյութերի նվազագույն երաշխիքային ժամկետներևայլն:	6	1
Գիրք	Նախահաշիվներ	Մանրամասնըստօբյեկտներինախահաշիվներիկազմում՝	1	1

ՐՔ-5		• Ըստգործող նորմերի		

**Գիրք-1 և 2-ումհայերենենռուսերենտարբերակներըկարողենհամատեղվել:

Նախագծայինփաստաթղթերիմշակմանարդյունքումնախագծողը պետք է ներկայացնի նաև՝

• շինարարականծրագրիկատարմանհամարօգտագործվողնյութերին (կամ) սարքերիուսարքավորումներիտեխնիկականբնութագրերըկազմված «Գնումներիմասին» ՀՀօրենքի13-րդհոդվածիպահանջներինհամապատասխան,

• Կապալիօբյեկտի, դրաառանձինմասերի (կոնստրուկցիաներինայլն) նօգտագործվելիքնյութերին (կամ) սարքերիուսարքավորումներիերաշխիքայինժամկետներիններկայացվողնվազագույնպահանջները,

• Աշխատանքներիառանձինտեսակներիկատարմանօրացուցայինժամանակացույցը,

•

Նախագծայինփաստաթղթերըպատվիրատուինհայերենենռուսերենլեզուներով՝թղթայիննէլեկտրոնային(AutoCAD, Word, Excel և PDF) տարբերակներով)

Նախագծիհամաձայնեցումը

▪ Նախագծման ընթացքում էսքիզային նախագիծը և նախագծային լուծումները, ներառյալ աշխատանքային ծավալները, համաձայնեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Գյումրու համայնքապետարանի և ՀՏԶՀ-ի գրասենյակի հետ:, ինչպես նաև ՀՀ կառավարության «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» 26 հունիսի 2009թ. N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով այլ շահագրգիռ կառույցների հետ:

▪ Նախագիծըհամաձայնեցնելշահագործողնայլշահագրգիռկազմակերպություններիհետ, ինչպեսնաևայլպետականլիազորմարմինների (ԱԻՆնայլն) հետըստանհրաժեշտության:

Այլպահանջներ

▪ Նախագծմանընթացքում, նախագծմանառաջադրանքումկարողենմտցվելմասնակիփոփոխություններևճշտումներ:

▪ Նախագիծըփորձաքննությաներկայացնումէպատվիրատուն:

▪ Նախագծայինփաստաթղթերըկնդունվենպատվիրատուիկողմիցմիայնբոլորանհրաժեշտհամաձայնեցումներինփորձաքննություններիդրականեզրակացություններիառկայությանդեպքում:

▪ ՆախագիծըպետքէհամապատասխանինախագծմանառաջադրանքինուՀՀտարածքումգործող շինարարականնախագծմաննորմերիններկանոներին:

▪ ՆախագծայինփաստաթղթերըպետքէկազմվենՀՀտարածքումգործողաշխատանքայինգծագրերիններկայացվողստանդարտներինհամապատասխան:

▪ Նախագծողիկողմիցշինարարությանսկզբիպահինպետքէկատարվիկառույցինշահարումըևանձնվիկապալառուին:

Նորմատիվ վկայակոչումներ

ՀՀ կառավարության «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում:ՀՀ կառավարության «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում

քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» 26 հունիսի 2009թ. N 792-Ն որոշում:

ՀՀՇՆ I-2.01-99 Ինժեներական հետազննություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ:

Բացի նշվածներից նաև օրենքով տվյալ գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ու նորմատիվ փաստաթղթեր:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

,,ԱՔԱՐԱ,, ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Գյումրի, Ծուլուկիձե 5

ՀՎՀՀ՝ 05524184
Հ/Հ՝ 2472600008040000
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Տնօրենի պ/կ
Արթուր Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«13» նոյեմբերի 2020 թ. կնքված
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/50/51 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020-2021թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	Նոյեմբեր 2020	Դեկտեմբեր 2020	Հունվար 2021	Փետրվար 2021	Մարտ 2021	Ապրիլ 2021	Մայիս 2021	Հունիս 2021	Հուլիս 2021	Օգոստոս 2021	Սեպտեմբեր 2021	Հոկտեմբեր 2021	Նոյեմբեր 2021	Դեկտեմբեր 2021	Ընդամենը
1	71241200/23	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում՝ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000	1,730,000
2	71241200/24	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում՝ Գյումրու Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000	1,225,000

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են ամսական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

,,ԱՔԱՐԱ,, ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Գյումրի, Ծուլուկիձե 5

ՀՎՀՀ՝ 05524184
Հ/Հ՝ 2472600008040000
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Տնօրենի պ/կ
Արթուր Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3
«13» նոյեմբերի 2020 թ. կնքված
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/50/51 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
___
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցվածծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրությաներկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված3.1
«13» նոյեմբերի 2020 թ. կնքված
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/50/51 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4
«13» նոյեմբերի 2020 թ. կնքված
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/50/51 ծածկագրով պայմանագրի

Աշխատանքներին ներգրավված մասնագետների ցանկ

Չափաբաժին N 1 - Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Հ/հ	**Հիմնական**աշխատակազմումներառվածմասնագետների	
	անունը, ազգանունը	պաշտոնը
1	2	3
1.	Մակսիմ Էշիլբաշյան	Թիմի ղեկավար
2.	Մակսիմ Էշիլբաշյան	Ճարտարապետ
3.	Հրանտ Կարապետյան	Ճարտարագետ կոնստրուկտոր
4.	Ստելլա Մարկոսյան	Ջերմագազամատակարարմանև օդափոխության Ճարտարագետ
5.	Վարդան Գևորգյան	Նախահաշվորդ

Չափաբաժին N 2 - Գյումրու Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն

Հ/հ	**Հիմնական**աշխատակազմումներառվածմասնագետների	
	անունը, ազգանունը	պաշտոնը
1	2	3
1.	Մակսիմ Էշիլբաշյան	Թիմի ղեկավար
2.	Մակսիմ Էշիլբաշյան	Ճարտարապետ
3.	Հրանտ Կարապետյան	Ճարտարագետ կոնստրուկտոր
4.	Վարդան Գևորգյան	Նախահաշվորդ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

,,ԱՔԱՐԱ,, ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Գյումրի, Ծուլուկիձե 5

ՀՎՀՀ՝ 05524184
Հ/Հ՝ 2472600008040000
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ Գյումրի մ/ճ
Տնօրենի պ/կ
Արթուր Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ